ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60,էլ հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA#

02.11.2016թ
305-ի 6

ՀՀ տարածքային կառավարման և
զարգացման նախարար
պարոն Դավիթ Լոքյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Լոքյան,

Տեղեկացնում ենք Ձեզ, որ Ինֆորմացիայի ազատության կենտրոն հասարակական կազմակերպությունն իրականացնում է Բաց կառավարման գործընկերություն միջազգային նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Գործողությունների երկրորդ ծրագրի իրականացման մոնիտորինգ:

Մոնիտորինգի անցկացման համար խնդրում ենք տրամադրել Գործողությունների ծրագրի վեցերորդ հանձնառության իրականացմանը վերաբերող հետևյալ տեղեկությունները.

1. 2016 թ.-ի օգոստոս, սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսների ընթացքում քանի՞ համայնքում է ներդրվել Համայնքային միկրոհարցումների ծրագիրը: Խնդրում ենք ներկայացնել գործընթացին առընչվող փաստաթղթերը՝ համայնքների հետ փոխհամաձայնության հուշագրեր, ավագանու որոշումներ կամ այլ:
2. 2016 թ.-ի հոկտեմբերի 31-ի դրությամբ քանի՞ կարճ հաղորդագրություն (SMS) է ուղարկվել համայնքների բնակիչներին: Ի՞նչ արդյունքներ են ստացվել:
3. Հանձնառությամբ նախատեսված 10 համայնքներում Ծրագրի ներդրման համար որքա՞ն գումար է ծախսվել մինչ օրս և ի՞նչ միջոցներից /պետական բյուջե, դրամաշնորհներ կամ այլ/: Խնդրում ենք տրամադրել համապատասխան իրավական ակտերի պատճենները /պայմանագրեր, հաշիվ ապրանքագրեր կամ այլ/:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ նախագահ
Լիանա Դոյդոյան